ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

խորհրդի նիստի

ք. Աշտարակ **26.10.2022թ.ժամը 15^{00}**

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետ**
Հ. Գույլանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ**
Է. Փարվանյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ**
Հ. Գևորգյանը	**ՀՀ մարզպետարանի գլխավոր քարտուղար**
Մ. Դատումյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական**
Մ. Հովհաննիսյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական**

Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի համայնքների ղեկավարներ, տեղակալներ

Զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի նախագահությամբ կայացավ ՀՀ Արագածոտնի մարզի խորհրդի հերթական նիստը: Նա ներկաներին ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որի վերաբերյալ առաջարկություններ չեղան և մեկնարկեց օրակարգային հարցերի քննարկումը:

Օրակարգում՝

1. *ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում իրականացված բերքահավաքի ընթացքի մասին:*
2. *Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրի ընթացքի մասին:*
3. *Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ:*
4. *Միջնաժամկետ զարգացման ծրագրերի ընթացքի և 2023 թվականի բյուջետային գործընթացը կազմակերպելու մասին:*
5. *Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2022-2023 թվականների սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ:*
6. *Համայնքներում իրականացված և իրականացվելիք ճանապարհաշինական ծրագրերի վերաբերյալ:*
7. *Համայնքային սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ:*
8. *Բնակչության ազդարարումն ապահովելու նպատակով մարզում ազդարարման համակարգի ներդրման վերաբերյալ:*
9. *Այլ հարցեր:*

Լսեցին՝

1. **ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում իրականացված բերքահավաքի ընթացքի մասին** */զեկուցող՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյան/*:

   /Զեկույցը կցվում է/:

Յու. Ազատյանը ներկայացրեց, որ մարզում առկա 54352.2 հա վարելահողերից միայն 50-60%-ն է օգտագործվում: Դրա պատճառներն են բնակավայրերից հեռու գտնվելը, քարքարոտությունը, ինչպես նաև ոռոգելիության դժվարությունները: Ոռոգման ջրի սակավությունը նաև առաջնահերթ խնդիր է ինտենսիվ այգիների հիմնման համար: Նախորդ տարվա ջերմատնային տնտեսությունների տարածքները ավելացել են մոտ 17 հեկտարով՝ 16,93 հեկտարից դառնալով մոտ 34 հա: Բերքհավաքի հետ կապված՝ նշվեց, որ հատկապես խաղողի մթերման խնդիրներ չեն եղել, քանի որ մարզում գործող գործարանները առաջնահերթությունը տվել են մարզի խաղող մթերողներին:

Քննարկման արդյունքում՝ **մարզպետ Ս. Մովսիսյանը հանձնարարեց**, որ մարզում բերքահավաքի հետ կապված՝ ուշադրության կենտրոնում պահել առաջ եկած ցանկացած խնդրի արագ լուծման կարևորությունը, ճշտել հնարավոր ռիսկային գործոնները:

2 ՀՀ – ում աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրի ընթացքի մասին */զեկուցող՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյան/:*

   /Զեկույցը կցվում է/:

Ներկայացվեց ծրագրի շահառու հանդիսացող տնտեսվարողների և ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրի շրջանակներում Արագածոտնի մարզում շահառուների հետ արդեն կնքվել են թվով 2016 պայմանագիր:

Մարզպետը հանձնարարեց՝ պետական աջակցության ծրագրերի լուսաբանման աշխատանքները շարունակական դարձնել, միշտ ուշադրության կենտրոնում պահել, ծրագրերի շահառուներին աջակցել ի հայտ եկած խոչընդոտները լուծելու հարցում:

3. ***Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ*** */ զեկուցող՝ ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. Գալստյան/:*

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը ներկայացրեց 2022 թվականի վերջին 9 ամիսների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները: Նշվեց, որ հավաքագրման պլանային առաջադրանքները գրեթե կատարել են Շամիրամ, Աշտարակ, Ապարան, Ալագյազ և Մեծաձոր համայնքները: Ցածր ցուցանիշ ունի Թալին համայնքը: Ակտիվ աշխատանքներ իրականացվում են ոչ միայն համայնքի ղեկավարների, այլ նաև ցածր ցուցանիշներ ունեցող վարչական շրջանների ղեկավարների հետ: Նշվեց նաև, որ հավաքագրման գործընթացում՝ հատկապես փոքր համայնքներում, առկա է գումարների հավաքագրման տեխնիկական խնդիրներ, կարիք կա գանձման մեխանիզմների պարզեցված և հեշտացված տարբերակների, որի ուղղությամբ աշխատանքներն ընթանում են:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանն առաջարկեց նորից վերանայել նախորդ նիստում հնչեցրած հանձնարարականը՝ սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշներն ըստ առանձին վարչական շրջանների համատեղ քննարկել, վարչական շրջանների ղեկավարներին ընդգրկել գործընթացում, որպեսզի մինչև տարեվերջ հնարավոր լինի ապահովել ցանկալի ցուցանիշները:

4. ***Միջնաժամկետ զարգացման ծրագրերի ընթացքի և 2023 թվականի բյուջետային գործընթացը կազմակերպելու մասին/*** *զեկուցող՝ ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. Գալստյան/*
/Ցուցանիշները կցվում են/:

ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. Գալստյանը ներկայացրեց մտահոգիչ իրավիճակը միջնաժամկետ զարգացման ծրագրերի ընթացքի և 2023 թվականի բյուջետային գործընթացի կազմակերպման ոլորտում: Նշվեց, որ համայնքները դեռևս չեն կատարել իրենց պարտավորությունները և չեն ներկայացրել դրանք, որպեսզի մարզպետարանն էլ հնարավորություն ունենա ամփոփի և ներկայացնի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Մարզպետն հանձնարարեց մեթոդական աջակցություն ցույց տալ համայնքներին այդ գործընթացը արագացնելու համար, որպեսզի ունենանք մի քիչ ուշացումով, բայց գոնե անթերի 2023 թվականի միջնաժամկետ ծրագրեր:

5. ***Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2022-2023 թվականների սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ*** */զեկուցող՝ քաղաքաշինության վարչության պետ Հ.Ստեփանյան/:*
/Զեկույցը կցվում է/:

Քաղաքաշինության վարչության պետը ներկայացրեց ավարտված, ընթացքցի մեջ գտնվող և նոր ներկայացվող սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն, որոնց վերաբերյալ տեղի ունեցած քննարկման արդյունքում մարզպետ **Ս. Մովսիսյանը հանձնարարեց** ավարտին հասցնել 2023 թվականին նախատեսվող սուբվենցիոն ծրագրերի նախագծերի և ամբողջական փաթեթների ներկայացման աշխատանքները:

6. ***Համայնքներում իրականացված և իրականացվելիք ճանապարհաշինական ծրագրերի վերաբերյալ*** / զեկուցող՝ քաղաքաշինության վարչության պետ Հ. Ստեփանյան/
/Զեկույցը կցվում է/:

Քաղաքաշինության վարչության պետի կողմից ներկայացվեց մարզային նշանակության ավտոճանապարհներին իրականացված ձմեռային և ամառային պահպանության սպասարկման, հարթեցման և մաքրման, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածում ճանապարհների նորոգման և հիմնանորոգման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

7. ***Համայնքային սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ*** / *զեկուցող՝ ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Հ. Ասատրյանը ներկայացրեց 2021թ.-ից ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն մեկնարկած համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքների ընթացքի վերաբերյալ հաշվետվություն: Նշվեց, որ 138 միավոր շենք-շինություններից այս պահի դրությամբ մարզի համայնքներում մնացել է ընդամենը 24 միավոր գույք, որոնք դեռևս գրանցված չեն:

Առաջարկվեց համայնքի ղեկավարներին, որպեսզի հնարավորինս սեղմ ժամկետում աշխատանքները հասցնեն լիակատար ավարտին:

8. ***Բնակչության ազդարարումն ապահովելու նպատակով մարզում ազդարարման համակարգի ներդրման վերաբերյալ*** */ զեկուցող՝ ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Հ. Ասատրյան:*

/Զեկույցը կցվում է/:

Տեղեկացվեց, որ ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունից և մարզի համայնքների ղեկավարների կողմից ստացված տվյալների ամփոփման արդյունքում պարզվել է, որ այս պահի դրությամբ մարզի համայնքներում առկա է ազդարարման 81 էլեկտրական շչակներ: Մարզի ամբողջ բնակչության ազդարարման ձայնաձածկույթի ապահովման համար անհրաժեշտ են ևս 69 շչակներ: Աշտարակ և Ապարան համայնքների կողմից հայտարարվել են էլեկտրական շչակների ձեռքբերման մրցույթներ:

Հաշվի առնելով գործընթացի կարևորությունը՝ առաջարկվեց Թալին, Ապարան, Մեծաձոր, Արևուտ, Ծաղկահովիտ և Ալագյազ համայնքներին 2023թ. տեղական բյուջեով նախատեսել անհրաժեշտ միջոցներ էլեկտրական շչակների ձեռք բերման և տեղադրման համար, որպեսզի մինչև 2023թ. մայիս-հունիս ամիսները աշխատանքներն ավարտվեն:

Մարզպետը, երկրում տիրող իրավիճակից ելնելով, ևս առանձնացրեց խնդրի կարևորությունը և **հանձնարարեց**, որպեսզի հետևողական աշխատանքներ իրականացվեն համայնքներում ոչ միայն շչակների ամբողջական տեղադրման, այլ նաև ապաստարանների բարեկարգման ուղղությամբ:

Զեկույցների ավարտից հետո ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. Գալստյանը հանդես եկավ **հայտարարությամբ**՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին 2023 թվականի համայնքների բյուջեի կազմման աշխատանքներն ավարտել մինչև դեկտեմբերի առաջին տասնօրյակը:

Այլ հայտարարություններ և հարցեր չեղան: Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին արդյունավետ համատեղ աշխատանքի համար:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝

Սերգեյ Մովսիսյան